

ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ, ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ԼԱՊԱՐԱՍԿՈՊԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Ուղեցույցը տրամադրում է հղիության ընթացքում իրականացվող վիրաբուժական միջամտությունների արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված ախտորոշման, բուժման և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել վիրահատական խնդիրներ ունեցող հղի պացիենտների բուժման արդյունքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով լապարասկոպիային:

Մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Հայաստանի վիրաբույժների միության անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել «Ամերիկյան Ստամոքսաղիքային Էնդոսկոպիկ Վիրաբույժներ» (Society of American Gastrointestinal and Endoscopic Surgeons - SAGES) կազմակերպության և բազմաթիվ հանձնաժողովների կողմից հաստատված վարման միջազգային ուղեցույցների, ինչպես նաև Cochrane library և UpToDate էլեկտրոնային շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation - GRADE): Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի վիրաբույժների միության անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Փաստաթուղթը նախատեսված է վիրաբույժների, մանկաբարձ-գինեկոլոգների, բժիշկ-ճառագայթաբանների և հղի կնոջ բուժսպասարկման շրջանակներում ներգրավված ցանկացած այլ մասնագետների համար:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա Ուղեցույցում լուսաբանվել են հղիության ընթացքում վիրահատական խնդիրներ ունեցողների սահմանումները, համաճարակաբանության, ռիսկի

գործոնների, ախտորոշման, կլինիկական պատկերի, մոնիտորինգի, բուժական միջամտությունների և ելքերի հիմնահարցերը: Առաջարկվել են ներդրման տարբերակները և աուդիտի ցուցանիշները: Ընդհանուր առմամբ ձևակերպվել է 23 խորհուրդ, որոնցից 18-ին շնորհվել է “ուժեղ”, 5-ին “թույլ” մակարդակներ:

Հետևություններ

Մասնագետների և փորձագետների մեծաքանակ խումբ եկել է համաձայնության հղիության ընթացքում իրականացվող վիրաբուժական միջամտությունների բազմաթիվ կարևոր սկզբունքների վերաբերյալ: Չնայած այն փաստին, որ որոշ խորհուրդներ ունեն թույլ ապացուցողական ուժ, այս մեթոդաբանությամբ մշակված տեղեկատվությունը՝ դա բարձր ռիսկով հղի պացիենտների բուժման արդյունքների բարելավման հիմքն է:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, սրբեղծման և գնահատման դասակարգման համակարգ, որովայնի ցավ, սուր որովայնային հիվանդություններ, վիրահատական խնդիրներ ունեցող հղիներ, լապարասկոպիայի արդյունավետությունը և անվտանգությունը, լեղապարկի հիվանդություններ, լապարասկոպիկ ապենդեկտոմիա, ձվարանի կիստա, տրոխլիտիզները հղի հիվանդների համար

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Կլինիկական գործնական ուղեցույցները մշակող աշխատանքային խումբը ջանքեր է գործադրում, որպեսզի խուսափի փաստացի կամ ողջամտորեն ընկալելի շահերի բախումից, որոնք կարող են առաջանալ աշխատանքային խմբի անդամների արտաքին հարաբերությունների, անձնական, մասնագիտական կամ գործարար հետաքրքրությունների պատճառով: Աշխատանքային խմբի բոլոր անդամները լրացրել են հայտարարություն, որով բացահայտում են այնպիսի հարաբերությունների առկայությունը, որոնք կարող են ընկալվել կամ հանգեցնել փաստացի շահերի բախման: Այս փաստաթուղթը պետք է թարմացվի և տեղեկատվությունը ճշգրտվի կլինիկական ուղեցույցների գործողության և թարմացման ընթացքում պարբերաբար: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը չի ունեցել ոչ մի ազդեցություն սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համակարգողը իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր անդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին:

Պատասխանատու համակարգող՝

Կուրդինյան Ռ.Մ., բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ընդհանուր վիրաբուժության ամբիոնի դոցենտ, «Աստղիկ» Բժշկական Կենտրոնի գլխավոր բժիշկ:

Աշխատանքային խմբի անդամներ.

- Արայիկ Անդրանիկի Ոսկանյան, բ.գ.թ., Մ.Հերացու անվան ԵՊԲՀ-ի լապարասկոպիկ և էնդոկրին վիրաբուժության ամբիոնի դոցենտ, «Աստղիկ» ԲԿ-ի վիրաբուժական բաժանմունքի վարիչ
- Պավել Ռաֆայելի Հակոբյան, բ.գ.թ., Մ.Հերացու անվան ԵՊԲՀ-ի ընդհանուր վիրաբուժության ամբիոնի դոցենտ, «Արամյանց» ԲԿ-ի վիրաբուժական կլինիկայի ղեկավար
- Վարդան Ռաֆայելի Բորոզան, բ.գ.թ., Մ.Հերացու անվան ԵՊԲՀ-ի լապարասկոպիկ և էնդոկրին վիրաբուժության ամբիոնի դոցենտ, «Աստղիկ» ԲԿ-ի լապարասկոպիկ վիրաբուժության բաժանմունքի վարիչ
- Արման Սերգեյի Նազինյան, Մ.Հերացու անվան ԵՊԲՀ-ի մանկաբարձություն և գինեկոլոգիա թիվ 2 ամբիոնի ասիստենտ, «Աստղիկ» ԲԿ-ի գինեկոլոգիական բաժանմունքի վարիչ
- Արթուր Մերուժանի Հարությունյան, «Աստղիկ» ԲԿ-ի ախտորոշման բաժնի վարիչ (բժիշկ - ռադիոլոգ)
- Լևոն Նիկիտայի Գրիգորյան, «Slav Med» ԲԿ-ի վիրաբուժական կլինիկայի վիրաբույժ - գինեկոլոգ

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում: Խորհուրդների մեծամասնությունը կիրառելի են վիրաբուժական և գինեկոլոգիական բաժանմունքներում հոսպիտալացված հղի պացիենտների համար:

Բովանդակություն

Նախաբան, ներածություն և համաճարակաբանություն

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Ախտորոշում

Պատկերավորման մեթոդներ

Վիրահատության եղանակը

Հիվանդների ընտրությունը

Լապարասկոպիան և հղիության եռամսյակը

Բուժումը

Լեղապարկի հիվանդություններ

Առանձին օրգանների հեռացում

Հղիի հսկողությունը վիրահատության ընթացքում

Տոկոլիտիկներ

Ամփոփում

Գրականության ցանկ

Հավելված 1. Ապացույցների որակի դասակարգում (GRADE համակարգ)

Հավելված 2. Ուղեցույցի խորհուրդների ամփոփում

Հապավումներ

ԵԹ՝ երակային թրոմբոզ

ՀՇ՝ համակարգչային շերտագրություն

ԼՄ՝ լապարասկոպիկ միջամտություն

ՄՌՇ՝ մագնիսառեզոնանսային շերտագրում

ՈԻՁՀ՝ ուլտրաձայնային հետազոտություն

GRADE (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation)՝

Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը

SAGES (Society of American Gastrointestinal and Endoscopic Surgeons)՝ Ամերիկյան

Ստամոքսաղիքային էնդոսկոպիկ Վիրաբույժներ

Նախաբան

Հղիության ընթացքում իրականացվող վիրաբուժական միջամտությունները պետք է նվազագույնի հասցնեն պտղի վնասման ռիսկը առանց վնասելու մոր անվտանգությունը: Գրականության վերջին տվյալները հաստատում են հղիության ցանկացած եռամսյակում իրականացվող լապարասկոպիայի արդյունավետությունը և անվտանգությունը այնպիսի արդյունքներով, ինչպես ընդունված, հանրաճանաչ մեթոդներով վիրահատությունների դեպքում: Բուժման արդյունքները բարելավելու համար վիրաբույժները պետք է տեղյակ լինեն հղիների վիրահատական միջամտությունների կատարման տարբերություններին:

Հղիության ընթացքում [1,2] կնոջը հաճախ կարիք է լինում կատարել ոչ միայն մանկաբարձական, այլ նաև որովայնային վիրահատություն (1-ը 500-ից մինչև 1-ը 635-ից): Հղիության ընթացքը բարդացնող ամենատարածված ոչ մանկաբարձական որովայնային անհետաձգելի հիվանդություններն են՝ սուր ապենդիցիտը, սուր խոլեցիստիտը և աղիքային անանցանելիությունը [1]: Ձվարանի կիստաները, ոլորումը, լեղաքարային հիվանդությունը, մակերիկամի ուռուցքները, աղիքային բորբոքային հիվանդությունների բարդությունները, ճողվածքների առկայությունը և որովայնի անհայտ ախտաձագման ցավը նույնպես կարող են առաջացնել հղիության ընթացքում վիրահատություն կատարելու անհրաժեշտություն: Նախկինում որոշ մասնագետներ պնդում էին, որ լապարասկոպիան հակացուցված է հղիության ընթացքում, քանի որ կարող են առաջանալ արգանդի տարբեր բնույթի վնասվածք կամ պտղի սնուցման

խանգարում (պերֆուզիայի նվազում): Սակայն ժամանակի ընթացքում և փորձի ձեռք բերման արդյունքում լապարասկոպիան դարձավ հղի կանանց վիրահատական խնդիրների լուծման ամենանախընտրելի տարբերակը [3]:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Հայաստանի վիրաբույժների միության անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել «Ամերիկյան Ստամոքսաղիքային Էնդոսկոպիկ Վիրաբույժներ»-ի (Society of American Gastrointestinal and Endoscopic Surgeons - SAGES) “Հղիության ընթացքում վիրաբուժական խնդիրների ախտորոշման բուժման և լապարասկոպիայի կիրառման ուղեցույց”-ի, ինչպես նաև Cochrane library և UpToDate էլեկտրոնային շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation - GRADE) [4]: Ապացույցների դասակարգման մանրամասները տես՝ Հավելված 1-ում. Ուղեցույցի խորհուրդների ամփոփումը տրված է Հավելված 2-ում:

Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի վիրաբույժների միության անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցը՝ առաջին հերթին նախատեսված է վիրաբույժների, գինեկոլոգների, բժիշկ-ճառագայթաբանների, անեսթեզիոլոգների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ

ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

I. Ախտորոշում

Որովայնի ցավի ախտորոշիչ մեթոդի ընտրությունը բարդ երկընտրանքի առջև է դնում բժշկին, քանի որ պետք է հաշվի առնվեն մեթոդի ռիսկերը և առավելությունները, թե՛ մոր և թե՛ պտղի համար: Որովայնային ցավի ախտորոշման հիմնական մեթոդի և դրա արդյունավետության մասին ասել է Ջախարի Կոպը դեռ 1921թ-ին, հայտարարելով, որ ավելի վաղ ախտորոշումը նշանակում է ավելի լավ կանխատեսումներ: Մոր օպտիմալ ախտորոշման համար կարող է պահանջվել ռադիոճառագայթի և իոնիզացնող ճառագայթի կիրառում, այդ իսկ պատճառով ցանկացած ախտորոշիչ միջամտությունից առաջ ռիսկ-առավելություն քննարկումը պետք է լինի առաջնային [5]:

Ա. Պատկերավորման մեթոդներ

Ուլտրաձայնային հետազոտություն (ՈՒՁՀ)

Խորհուրդ 1. Ուլտրաձայնային հետազոտությունը հղի հիվանդի մոտ սուր որովայնային ցավի ախտաճագումը բացահայտելու անվտանգ և օգտակար մեթոդն է (չափավոր որակի ապացույցներ, ուժեղ խորհուրդ):

Որովայնային ցավը հղիների մոտ լինում է գինեկոլոգիական և ոչ գինեկոլոգիական խնդիրների պատճառով: ՈւՁՀ-ն համարվում է անվտանգ, քանի որ ոչ մի տեսակի բացասական հետևանք չի արձանագրվել՝ ոչ մոր համար և ոչ էլ պտղի: Որովայնի ցավի առաջացման գինեկոլոգիական պատճառներից են՝ փողի ոլորումը, ընկերքի տարանջատումը, արգանդի պատռվածքը, պտղի մահը: Ոչ գինեկոլոգիականներից՝ հաճախ հանդիպում են լեղաքարային հիվանդությունը և ապենդիցիտը [6-12]:

Իոնացնող ճառագայթման ռիսկերը

խորհուրդ 2. Արագ և ճշգրիտ ախտորոշումը պետք է գերակայի մտահոգությունները իննացնող ճառագայթման համար: Ճառագայթման դոզան չպետք է գերազանցի 5-10 ռադ. չափման միավորը հղիության ընթացքում (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ):

Հակառակ դեպքում այն կարող է հանգեցնել քրոմոսոմային մուտացիաների, նյարդաբանական խանգարումների, մտավոր հետամնացության, ինչպես նաև մեծանում է մանուկ հասակում լեյկեմիայով հիվանդանալու հավանականությունը: Բացասական ազդեցության համար կարևոր նախապայման է նաև հղիության ժամկետը [8,9,13], քանի որ բեղմնավորման հատկապես առաջին շաբաթում մեծ է մահացության տոկոսը: Ընդհանուր ճառագայթման դոզան պտղի վրա չպետք է գերազանցի 5-10 ռադ.: Օրինակ՝ միայն որովայնի ռադիոգրաֆիայի ժամանակ միջին ճառագայթման դոզան կազմում է 0.1-0.3 ռադ, այն դեպքում [14,15], երբ փոքր կոնքի օրգանների համակարգչային տոմոգրաֆիայի ժամանակ պտղի ճառագայթումը հասնում է մինչև անգամ 5 ռադ. (Տես՝ Աղյուսակ 1.):

Աղյուսակ 1.

Պտղի ճառագայթահարման դոզան անցկացվող ախտորոշիչ հետազոտությունների ժամանակ

Հետազոտություն	Ճառագայթահարման Չափ (rads)
Որովայնային ռադիոգրաֆիա	0.1-0.3
Վիրահատական խոլանգիոգրաֆիա	0.2
Ողնաշարի գոտկային հատվածի ռադիոգրաֆիա	0.6

Ներերակային պիելոգրաֆիա	0.6
Բարիումով հոգնա	0.7
Փոքր կոնքի համակարգչային շերտագրում	1-5
Էնդոսկոպիկ լեղապարկի և ենթաստամոքսային գեղձի ռետրոգրաֆ հետազոտություն	2-12.5

Պտղի կենտրոնական նյարդային համակարգի ամենազգայուն շրջանը 10-ից - 17 շաբաթականն է, ուստի, այդ շրջանում գերադասելի է խուսափել ռադիոլոգիական միջամտություններից: Հղիության վերջում ճառագայթումը վտանգ է ներկայացնում արդեն մանկական տարիքում չարորակ հիվանդությունների առաջացման առումով: Երեխայի մոտ չարորակ հիվանդության և լեյկեմիայի առաջացման հավանականությունը միջինը կազմում է 0.2-0.3%: Նշված թիվը մեծանում է յուրաքանչյուր 1 ռադ.-ի դեպքում՝ 0.06 %-ով:

Պտղի վրա մինչև 0.5 ռադ. ճառագայթումը մեծացնում է ինքնաբեր վիժման, զարգացման խանգարումների, մտավոր հետամնացության և մանկական տարիքում չարորակ հիվանդությունների առաջացման ռիսկը՝ 1:6000-ի հարաբերությամբ, ինչը գերազանցում է ռիսկային գործոնի միջին մակարդակը: Կա հիմնավորված տարբերակ, որ տերատոգենեզի խանգարման հավանականությունն աննշան է 5 ռադ. և ավելի քիչ ճառագայթման ժամանակ, սակայն այն կարող է բարձրանալ 15 ռադ. և ավելի դոզայի դեպքում: Հետևություն կարելի է անել, որ ոչ մի ախտորոշիչ հետազոտություն չպետք է գերազանցի 5 ռադը [9,13,14,16-19]:

Համակարգչային շերտագրություն

Խորհուրդ 3. Ժամանակակից բազմաշերտ համակարգչային շերտագրությունը (ՀՇ) ապահովում է ճառագայթման մինիմալ դոզա, և անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել հղիության ժամանակ (չափավոր որակի ապացույցներ; թույլ խորհուրդ):

ՀՇ կիրառվում է հղի պացիենտի մոտ որովայնի ցավի առկայության և դրա պատճառի ախտորոշման համար: ՀՇ-ի կիրառումը մեծ նվաճում է որովայնում ախտաբանական պրոցեսների ախտորոշման համար հղիների մոտ: Ճառագայթային դոզան փոքր կոնքի շերտագրման ժամանակ չպետք է գերազանցի 2 ռադ.-ը, բայց այն կարող է հասնել մինչև 5 ռադ.-ի ամբողջ որովայնի և փոքր կոնքի հետազոտման ժամանակ: Այս մեթոդը համարվում է անվտանգ, սակայն բարձր ճառագայթային դոզան մանկական հասակում արյան չարորակ հիվանդությունների զարգացման պատճառ կարող է դառնալ: ՀՇ-ի տվյալ հատվածի արձանագրային հետազոտությունը և ճառագայթման դոզան, միշտ պետք է լինի յուրաքանչյուր պացիենտի համար անհատական՝ հիմնավորելով դրա անհրաժեշտությունը և ընտրել հնարավոր ամենամինիմալ ճառագայթման դոզան [8,20-22]:

Մագնիսա-ռեզոնանսային շերտագրում (ՄՌՇ)

Խորհուրդ 4. Մագնիսա-ռեզոնանսային շերտագրումը՝ առանց Գադոլինիում կոնտրաստ նյութի ներերակային ներարկման, թույլատրելի է հղիության ցանկացած ժամկետում (ցածր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ):

Ախտորոշման այս մեթոդը փափուկ հյուսվածքների գերազանց պատկերավորում է ապահովում՝ առանց իոնացնող ճառագայթների և համարվում է անվտանգ մեթոդ հղիների համար: Որոշ հեղինակներ հայտնում են իրենց անհանգստությունը կապված ձայնային աղմուկի հետ և նրա թողած ազդեցությունը պտղի վրա: Սակայն չկա ոչ մի հստակ կողմնակի երևույթ, որը հնարավոր է առաջանա մագնիսա-ռեզոնանսային շերտագրման պատճառով: Իսկ Գադոլինիումի ներարկումից խուսափումը

պայմանավորվում է դրա տարրերի բացասական ազդեցությամբ պտղի վրա, որոնք կարող են անցնել ընկերքի միջոցով [23,24-28,29,30]:

Միջուկային բժշկություն

Խորհուրդ 5. Ռադիոնուկլիդային ախտորոշումը հիմնականում անվտանգ է թե մոր և թե պտղի համար (ցածր որակի ապացույցներ, թույլ խորհուրդ):

Ռադիոֆարմաքարատների, այդ թվում Տեխնեցիում-99m ներարկումն ընդհանուր առմամբ թույլատրելի է, եթե ճառագայթման դոզան չգերազանցի 0.5 ռադ-ը: Ռադիոլոգի հետ խորհրդատվությունը պետք է կազմակերպել մինչև ուսումնասիրությունը և նրա կարծիքը համարել առաջնային [31,32]:

Խոլանգիոգրաֆիա

Ուղեցույց 6. Ներվիրահատական և էնդոսկոպիկ խոլանգիոգրաֆիան ընտրողաբար օգտագործվում է հղիության ընթացքում: Խոլանգիոգրաֆիայի ընթացքում որովայնի ստորին հատվածը պետք է պաշտպանված լինի, որպեսզի մինիմալի հասցվի պտղի ճառագայթումը (ցածր որակի ապացույցներ; թույլ խորհուրդ):

Խոլանգիոգրաֆիայի ընթացքում դոզան գնահատվում է 0.2-0.5 ռադ.: Խոլանգիոսկոպիայի ընթացքում հասցված ճառագայթային չափաբաժինը հասնում է մինչև 20 ռադ/րոպե, բայց այն կարող է տատանվել՝ կախված հիվանդի դիրքից, չափերից և օգտագործվող սարքավորումից: Խոլանգիոգրաֆիայի ժամանակ պտղի և իոնացնող ճառագայթման սարքի մեջտեղում պետք է դրվի պաշտպանիչ շերտ այնպես, որ չխանգարի նորմալ պատկերավորմանը: Մասնավորապես խոլանգիոգրաֆիայից հետո կողմնակի ազդեցություն հղիի կամ պտղի մոտ չի գրանցվել [33-38]:

Էնդոսկոպիկ ռետրոգրադ խոլանգիոպանկրեատոգրաֆիկ հետազոտության ժամանակ ճառագայթման դոզան կազմում է միջինը 2-12 ռադ.: Էնդոսկոպիկ պապիլոսֆինկտերոտոմիայի բարդություններից է արյունահոսությունը: Ոչ հղիների մոտ արյունահոսության վտանգը հասնում է 1.3%-ի, իսկ պանկրեատիտի առաջացումը՝ 3.5%-

11%: Այս հավելյալ ռիսկերի բացասական և դրական կողմերը պետք է քննարկել հիվանդի հետ, հաշվի առնելով այլընտրանքային հետազոտությունների անցկացման հավանականությունը նույնպես: Խոլանգիոսկոպիայի համար այլընտրանքային տարբերակ է ներվիրահատական ՈՒՁՀ-ն և խոլեդոխոսկոպիան: Այս երկու միջոցներն էլ ընդունելի են, եթե վիրաբույժը տիրապետում է բոլոր հմտություններին և կարողանում է համապատասխան սարքավորումներով իրականացնել տվյալ միջամտությունները: Լեդապարկի և ենթաստամոքսային գեղձի հետազոտման տարբերակ է նաև մագնիսա-ռեզոնանսային շերտագրումը, որը աշխարհում համատարած ընդունված է: Այն օգտակար ախտորոշիչ մեթոդ է, սակայն չունի բուժական հնարավորություն և հիմնովին չի ուսումնասիրված հղի կանանց համար:

Բ. Վիրահատության եղանակը

Խորհուրդ 7. Սուր որովայնի պատկերի առկայության դեպքում լապարասկոպիայով ախտորոշման եղանակի կիրառումն անվտանգ և արդյունավետ է, որն օգտագործվում է նաև վերջինիս բուժման համար (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ):

Լապարասկոպիայով ախտորոշման եղանակը ապահովում է ներորովայնային օրգանների անմիջական ուղղակի դիտումը: Թեև այն լիարժեք պիտանի չէ առաջնային ախտորոշման համար, այնուամենայնիվ հանդիսանում է արդարացված և խելամիտ այլընտրանքային ճառագայթային ախտորոշիչ տարբերակ: Մեթոդի առավելություններն են՝ իոնացնող ճառագայթներից խուսափումը, ախտորոշման ճշգրտությունը և տվյալ պահին վիրահատական խնդրին լուծում տալու անմիջական հնարավորությունը: Այն անվտանգ է և կարող է իրականացվել հղիության ցանկացած եռամսյակում [39-51]:

II. Պացիենտների ընտրությունը

Նախավիրահատական շրջանում որոշումների ընդունումը

Խորհուրդ 8. Սուր որովայնի դեպքում լապարասկոպիայի կիրառման ցուցումները նույնն են հղիների և ոչ հղիների մոտ (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ):

Վիրաբուժական մոտեցման որոշումը պետք է կայացվի՝ հիմնվելով վիրաբույժի հմտությունների, համապատասխան սարքավորումների ու անձնակազմի առկայության վրա: Պետք է վիրահատության առավելությունները և հնարավոր բարդությունները պատշաճ քննարկվեն հիվանդի հետ: Նաև պետք է ապահովվի և երաշխավորվի հետվիրահատական ցավի նվազեցումը, հիվանդանոցային պայմաններում մնալու ժամկետի կրճատումը և աշխատունակության արագ վերականգնումը [40-45,52-55]:

Լապարասկոպիան և հղիության եռամսյակը

Խորհուրդ 9. Լապարասկոպիկ միջամտությունները (ԼՄ) կարող են իրականացվել հղիության ցանկացած եռամսյակում (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ)

Լապարասկոպիկ միջամտությունը կարելի է կատարել հղիության բոլոր ժամկետներում: Նախկինում, առաջարկում էին հետաձգել վիրահատական միջամտությունները մինչև երկրորդ եռամսյակ՝ անսպասելի կամ ինքնաբեր վիժումից խուսափելու համար, սակայն ներկայիս գրականությունը հերքում է ԼՄ-րի վտանգը՝ հղիության ցանկացած եռամսյակում, թե՛ մոր, թե՛ պտղի համար: Անհրաժեշտ վիրահատությունների անցկացման հետաձգումը մինչև ծննդաբերությունը, կարող է հանգեցնել հետագա բարդությունների թե՛ պտղի և թե՛ մոր համար: Ենթադրվում էր, որ վիրահատությունների անցկացման ամենահարմար ժամկետը 26-ից 28 շաբաթականն է, սակայն մի շարք հետազոտությունների արդյունքում այս պնդումը հերքվել և ապացուցվել է, որ բարեհաջող խոլեցիստէկտոմիա և ապենդեկտոմիա կարելի է անցկացնել նույնիսկ հղիության երրորդ եռամսյակի վերջում: Չնայած որ, լապարասկոպիան ապահով կերպով կարող է կիրառվել հղիության ընթացքում և ունենալ բարեհաջող ելք մոր և պտղի համար, այնուամենայնիվ դրա երկարատև ազդեցությունը պտղի համար ուսումնասիրված չէ:

Վերջին հետազոտություններից մեկը, որն անցկացվել է մեկից ութ տարեկան 11 երեխաների մոտ, զարգացման կամ աճի ոչ մի խանգարում չի հայտնաբերել [56-65]:

V. Բուժումը

Լապարասկոպիայի առավելություններից են՝ թմրամիջոցներից խուսափելու շնորհիվ նվազեցվում են պտղի մոտ թթվածնային անբավարարությունը, վերքային բարդությունները, հիվանդանոցից հնարավորինս շուտ դուրսգրումը, թրոմբոէմբոլիայի առաջացման վտանգը: Կատարելագործված լապարասկոպիկ վիրահատության շնորհիվ իջնում է արգանդի գրգռվածության աստիճանը, որը իր հերթին նվազեցնում է վիժման կամ վաղաժամկետ ծննդաբերության հավանականությունը [66-72]:

Պացիենտի դիրքը վիրահատական սեղանի վրա

Խորհուրդ 10. Հղի հիվանդը պետք է պառկի ձախ կողքի վրա, որպեսզի նվազի խոշոր անոթների սեղմման աստիճանը (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ)

Երբ հղի պացիենտը պառկած է մեջքի վրա արգանդի ստորին հատվածը ճնշում է գործադրում խոշոր անոթների վրա, ինչի արդյունքում դեպի սիրտ գնացող արյան հոսքը նվազում է, որն էլ հղիի մոտ բերում է հիպոտենզիայի (Զ/Ճ իջեցման) և վիրահատության ժամանակ կարող է առաջանալ ընկերքի պերֆուզիայի խանգարում: Ձախ կողքի վրա պառկելը հնարավորություն է տալիս զգալի կերպով խուսափել նման բարդությունից [73-75]:

Սկզբնական գործողություններ

Խորհուրդ 11. Որովայնի խոռոչի հասանելիությունը կարելի է ապահովել բաց (Հասսոնի) եղանակով, Վերեշի ասեղով կամ օպտիկական տրոակարի միջոցով (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ)

Նախապատվությունը հղիների վիրահատությունների դեպքում հիմնականում տրվում է Հասսոնի եղանակին կամ Վերեշի ասեղի կիրառմանը: Վերեշի ասեղի օգտագործման դեպքում կան մտահոգություններ կապված արգանդին և ներորովայնային օրգաններին

վնասվածք հասցնելու հետ: Առաջարկվում է նաև ենթակողային տարածությունով որովայնի խոռոչ անցնելու տարբերակը, քանի որ ներորովայնային տիրույթը փոխվում է երկրորդ և երրորդ եռամսյակների սկզբում: Եթե որովայնի խոռոչ մուտք գործելու ժամանակ ճիշտ հսկվի արգանդի հատակի բարձրությունը և առաջային պատը լինի լավ բարձրացված, Հասսոնի տեխնիկան և Վերեշի ասեղը կարելի է անվտանգ և արդյունավետ օգտագործել: Առաջարկվել է նաև տրոակարի ներդրումը կատարել ստանդարտ կոնֆիգուրացիայից տարբեր ձևով՝ արգանդի չափը հաշվի առնելով: ՈւՁՀ հսկողության տակ տրոակարի օգտագործումը նկարագրված է որպես երաշխավորված մեթոդ արգանդի վնասվածքից խուսափելու համար [76-81]:

Ներորովայնային ճնշման ապահովումը

Խորհուրդ 12. CO₂ գազի 10-15մմ. սս. չափով ներմուծումը կարելի է անվտանգ կերպով իրականացնել հղիների մոտ (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ)

Հնարավոր բացասական հետևանքների առաջացման պատճառով այս միջոցը լայնորեն ընդունված չէ և շատ մասնագետներ կողմ են հղիների մոտ առանց գազի լապարասկոպիայի անցկացմանը: Հղիների մոտ ստոծանին տեղակայված է ավելի բարձր՝ աճող պտղի պատճառով, ինչը բերում է թոքերի ծավալի փոքրացման և ֆունկցիոնալ հնարավորությունների իջեցման: Այդ իսկ պատճառով, ներորովայնային ճնշման բարձրացումը գազով պետք է կատարվի առավելագույնը 12 մմ. սս. ուժով ֆիզիոլոգիական վատթարացումից խուսափելու համար: Մյուսները պնդում են, որ 12 մմ.սս. ճնշման դեպքում ներորովայնային խոռոչի բավարար արտացոլում չի ապահովվում: Դեռևս 15 մմ. սս. ճնշումով իրականացված լապարասկոպիաները հղիների մոտ չեն թողել բացասական արդյունք՝ թե պտղի, թե մոր վրա [82-94]:

Քանի որ ածխաթթու գազի ներմուծումը իրականացվում է որովայնի խոռոչ, կան մտահոգություններ՝ կապված պտղի վրա կապնապերիտոնեումի ազդեցության հետ: Որոշ հետազոտություններ իրականացված են կենդանիների վրա, որոնց արդյունքում

հայտնաբերվել է կենդանու պտղի մոտ ացիդոզի առաջացում՝ զուգակցված տախիկարդիայի, հիպերտենզիայի և հիպերկապնիայի հետ: Սակայն մարդու պտղի վրա թողած ոչ մի բացասական ազդեցություն կապնոպերիտոնետումի ժամանակ չի գրանցվել:

CO₂-ի մոնիտորինգային հսկումը վիրահատության ժամանակ

Խորհուրդ 13. Ներվիրահատական CO₂- մոնիտորինգային հսկումը կապնոգրաֆի օգնությամբ կարելի է անվտանգ իրականացնել հղիների մոտ (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ)

Կապնոպերիտոնետումի ազդեցությունը օրգանիզմի վրա ուսումնասիրվել է տարբեր սարքերի միջոցով, վիրահատության ժամանակ հնարավոր բացասական հետևանքներից խուսափելու համար: Բազմաթիվ քննարկումներ են անցկացվել մոր զարկերակային արյան մեջ PaCO₂ և ETCO₂ մոնիտորինգային հսկման անհրաժեշտության վերաբերյալ: Ներկայումս ապացուցված է ETCO₂-ի չափման անվտանգությունն ու էֆեկտիվությունը, ավելի քիչ ինվազիվ կապնոգրաֆիայի միջոցով, ինչի հետևանքով արյան մեջ գազի չափման ստանդարտ մոնիտորինգը դարձել է ոչ անհրաժեշտ [92-99]:

Երակային թրոմբոէմբոլիայի (ԵԹ) առաջացման կանխարգելում

Խորհուրդ 14. Վիրահատության ժամանակ և հետվիրահատական վաղ շրջանում պնևմատիկ կոմպրեսիայի կիրառումը, հնարավորինս շուտ ոտքի կանգնելն ու քայլելը հանդիսանում են խորը տեղակայված երակների թրոմբոէմբոլիկ հիվանդության առաջացման կանխարգելիչ մեթոդներ հղիների մոտ (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ):

Հղիների մոտ ԵԹ-ի առաջացման նախատրամադրվածությունը կազմում է 0.1-0.2%, իսկ CO₂- ով անցկացվող կապնոպերիտոնետումը մեծացնում է երակում կանգային երևույթների առաջացման ռիսկային գործոնը: Գազի՝ 12 մմ. սս. չափով ներմուծումը առաջացնում է արյան շրջանառության զգալի խանգարում, որը չի կարող լիովին կանխարգելվել կոմպրեսիոն սարքերի կամ էլէկտրական խթանիչների միջոցով: Հիմնական

կանխարգելիչ մեթոդները նույնպես կիրառվում են հղի հիվանդների դեպքում: Հղիների մոտ թրոմբոէմբոլիկ բարդությունների կանխարգելման գործում ցածրամոլեկուլյար հեպարինի արդյունավետության մասին չկան բավարար տվյալներ, թեև այդ նպատակով այն կիրառվում է խոշոր վիրահատական միջամտությունների ժամանակ: Հղիության ընթացքում հակամակարդիչների կիրառման առումով հեպարինն ապացուցել իր անվտանգությունը և հանդիսանում է ընտրության միջոց [100-103]:

Լեղապարկի հիվանդություններ

Խորհուրդ 15. Խոլեցիստէկտոմիան լեղապարկի հիվանդության բուժման տարբերակ է հղիների համար, անկախ հղիության եռամսյակից (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ)

Նախկինում այս հիվանդության ոչ վիրահատական՝ սիմպտոմատիկ (ախտանշանային) բուժման տարբերակն էր ընդունված: Սակայն այս դեպքում հետազոտությունները ցույց են տալիս, որ հիվանդությունը տալիս է ռեցիդիվ հղիության առաջին եռամսյակում՝ 92% հավանականությամբ, երկրորդում՝ 64% և 44%՝ երրորդ եռամսյակում: Վիրահատական բուժման հետաձգումը բերում է բարդությունների առաջացման վտանգի, որոնցից են անսպասելի վիժումները և վաղաժամկետ ծննդաբերությունը [104-112]:

Ընդհանուր առմամբ, լեղաքարային հիվանդության ոչ վիրահատական, սիմպտոմատիկ բուժումից հետո 23% հիվանդների մոտ կարող է զարգանալ սուր խոլեցիստիտի կամ պանկրեատիտի պատկեր, ինչը 10-60% դեպքերում բերում է պտղի մահվան: Այդ իսկ պատճառով ներկայումս վիրահատական մեթոդներից լայնորեն կիրառելի է հատկապես լապարասկոպիան, քանի որ այն երբևէ չի հանդիսացել պտղի մահվան պատճառ և դրա ժամանակ կողմնակի էֆեկտները բացակայում են և բուժումը դառնում է լիարժեք:

Ընդհանուր լեղածորանում քարերի առկայություն

Խորհուրդ 16. Խոլեդոխոլիթիազը հղիության ընթացքում կարող է հաստատվել էնդոսկոպիկ նախավիրահատական ռետրոգրադ խոլանգիոպանկրեատոգրաֆիայով,

զուգակցված սֆինկտերոտոմիայի հետ, որին կարող է հետևել լապարասկոպիկ խոլեցիստէկտոմիան, լեղածորանի լապարասկոպիկ հետազոտությունը կամ հետվիրահատական էնդոսկոպիկ ռետրոգրադ խոլանգիոպանկրեատիկոգրաֆիան (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ):

Բարդությունները, որոնք կարող են առաջանալ խոլեդոխոլիթիազի ժամանակ, նույնն են ինչպես հղիների, այնպես էլ ոչ հղիների մոտ: Սակայն շատ հազվադեպ է գրանցվել, և բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ խոլեդոխոլիթիազի դեպքում կատարվող նախավիրահատական էնդոսկոպիկ [113-121] ռետրոգրադ խոլանգիոպանկրեատիկոգրաֆիայի հիմնական ծորանի հետազոտումից հետո և հաջորդաբար կատարվող լապարասկոպիկ խոլեցիստէկտոմիայի արդյունավետությունը:

Խորհուրդ 17. Լապարասկոպիկ ապենդեկտոմիան կարող է անվտանգ կերպով կատարվել հղի հիվանդների մոտ (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ)

Այն ամենանախընտրելի բուժման տարբերակն է ապենդիցիտով հղիի համար, և բազմաթիվ հետազոտություններ հաստատում են դրա անվտանգ և արդյունավետ լինելը: Շատ հազվադեպ դեպքերում է, որ լապարասկոպիկ ապենդեկտոմիան կարող է դառնալ վաղաժամկետ ծննդաբերության պատճառ, իսկ պտղի մահացության դեպքեր ընդհանրապես չեն գրանցվել: Ապենդիցիտի առկայության ճշգրիտ և ժամանակին ախտորոշումը հղիի մոտ իջեցնում է պտղի մահվան ռիսկերը և բարձրացնում բուժման լավ արդյունքներ ստանալու հավանականությունը: Մեծամասամբ կլինիկական պատկերը բավարար է լինում ախտորոշման համար, սակայն հավելյալ միջոցների կիրառումը, ինչպիսիք են՝ ուլտրաձայնային հետազոտությունը, համակարգչային տոմոգրաֆիան կամ մագնիսա-ռեզոնանսային շերտագրումը, կարող են անհրաժեշտ լինել ախտորոշման հաստատման համար [122-130]:

Լապարասկոպիկ ապենդեկտոմիայի արդյունավետությունը հաստատված է, սակայն, վերջերս մի հետազոտության արդյունքներ ցույց են տվել, որ որոշ դեպքերում հղիի համար լապարատոմիան ավելի գերադասելի է քան լապարասկոպիան:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել 2.3 %-ով պտղի մահվան առաջացման ավելի մեծ հավանականությունը լապարասկոպիայի ժամանակ, քան սովորական ապենդեկտոմիայի դեպքում: Սակայն, դա միակ հետազոտությունն էր, որը հակասական արդյունքներ ստացավ ընդդեմ լապարասկոպիկ ապենդեկտոմիայի: Այնուամենայնիվ, հետազոտությունները շարունակվում են, իսկ լապարասկոպիկ ապենդեկտոմիան շարունակում է մնալ ամենանախընտրելի բուժման տարբերակը:

Առանձին օրգանների հեռացում

Խորհուրդ 18. Լապարասկոպիկ եղանակով մակերիկամի մասնահատումը, նեֆրեկտոմիան և սպլենեկտոմիան անվտանգ են և հղիների համար (ցածր որակի ապացույցներ; թույլ խորհուրդ)

Մակերիկամի լապարասկոպիկ հեռացումը (մասնահատումը) ապացուցել է իր էֆեկտիվությունը առաջնային հիպերալդոստերոնիզմի, Կուշինգի համախտանիշի և ֆեոքրոմոցիտոմայի դեպքում: Լապարասկոպիկ սպլենեկտոմիան ժամանակի ընթացքում դառնում է էլ ավելի ընդունված վիրահատական եղանակ հղի հիվանդների համար: Հակաֆոսֆոլիպիդային համախտանիշով, ժառանգական սֆերոցիտոզով և աուտոիմուն թրոմբոցիտոպենիայով հիվանդները ենթարկվել են լապարասկոպիկ սպլենեկտոմիայի և ունեցել են բուժման բարեհաջող ընթացք և ավարտ թե՛ մոր, և թե՛ պտղի համար: Նեֆրեկտոմիան անցկացվել է 2 հղի հիվանդների մոտ, հղիության և՛ առաջին, և՛ երկրորդ եռամսյակում: Երկու դեպքերում էլ, լապարասկոպիկ նեֆրեկտոմիան անցել է անվտանգ և առանց ինչ-որ բարդությունների [131-147]:

Ճվարանի կիստաներ

Խորհուրդ 19. Լապարասկոպիան համարվում է անվտանգ եղանակ ձվարանի կիստաներ ունեցող հղի հիվանդների համար: Ընդունելի է նաև հղի ուղղակի հսկողության տակ մնալը, եթե ՈւՁՀ-ի ժամանակ կիստաների որևէ չարորակացման նշան չի նկատվել և օնկոմարկերները համապատասխանում են նորմային: Ուղղակի

հսկողության տակ պահելը նման հիվանդներին ընդունելի է, եթե կիստոզ օջախների չափը չի գերազանցում 6 սմ-ը (ցածր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ)

Հղիության ժամանակ ձվարանի կիստաների առաջացման հավանականությունը կազմում է 2%: Դրանք հիմնականում ի հայտ են գալիս հղիության առաջին եռամսյակում և քանի որ հանդիսանում են ֆունկցիոնալ խանգարման կիստաներ, 85-90% դեպքերում այն կիստաները՝ որոնց չափը չի գերազանցում 6 սմ-ը, ինքնուրույն անհետանում են երկրորդ եռամսյակում: Հենց այս պատճառով էլ կոնսերվատիվ բուժումը և հսկողությունը համարվում են բավարար: Սակայն 2-6% դեպքերում նկատվել է ֆունկցիոնալ կիստայի և տերատոմաների չարորակացում [148-169]:

Նախկինում, չարորակ նորագոյացությունների զարգացման վտանգի և ռիսկի առաջացումը և կապված դրա հետ շտապ վիրահատական միջամտությունը հանգեցրել էին նրան, որ ընտրողաբար կատարվում էր կիստաների հեռացում, որոնց գոյությունը պահպանվում էր 6 շաբաթական հղիությունից հետո և 6 սմ-ից մեծ տրամագիծ ունեն: Ներկայումս, այս պացիենտների հսկողության տակ մնալն ավելի նախընտրելի է, ելնելով վերջին հետազոտության արդյունքներից, եթե իհարկե ուլտրաձայնային հետազոտությամբ չկան չարորակացման նշաններ, օնկոմարկերները նորմալի սահմանում են և հղիի մոտ բացակայում են ախտանիշները: Հակառակ դեպքում կիստաների հեռացումը լապարասկոպիայով ընդունելի և կիրառելի է, քանի որ անվտանգ է հղիության ցանկացած եռամսյակում: Ավելի խորը ուսումնասիրելու համար, կատարվել է հետազոտություն 88 հղիի մոտ, և բոլորն ել ունեցել են հիվանդության բարեհաջող ավարտ, կիստաների լապարասկոպիկ և լապարատոմիկ եղանակով հեռացումից հետո:

Ձվարանի կիստաների և փողի ոլորում

Խորհուրդ 20. Լապարասկոպիան ընդունված է այս դեպքում թե ախտորոշման, և թե բուժման համար, եթե իհարկե հիվանդի կլինիկական պատկերը չի պարտադրում լապարատոմիայի անցկացման (ցածր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ):

Փողի և ձվարանի ուղորումը հանդիպում է 10-15%-ի մոտ: Եթե ավստորոշումը կատարվում է ժամանակին, մինչև հյուսվածքների նեկրոզվելը, լապարասկոպիկ եղանակով պտտումը, հետուղել հնարավոր տարբերակ է: Իսկ ուշ ավստորոշման դեպքում սա կարող է դառնալ փողի մեռուկացման պատճառ, ինչն էլ կհանգեցնի պերիտոնիտի, վիժման, վաղաժամկետ ծննդաբերության կամ մահվան: Մեռուկացված փողը կամ ձվարանը ենթակա են ամբողջովին հեռացման, որից հետո առաջանում է պրոգեստերոնաթերապիայի անցկացման անհրաժեշտություն, եթե հեռացված դեղին մարմինը 12 շաբաթական վաղեմություն ունի: Լապարատոմիայի անհրաժեշտություն կարող է առաջանալ՝ ելնելով հիվանդի կլինիկական վիճակից [170-180]:

VI. Հղիի հսկողությունը վիրահատության ընթացքում

Պտղի սրտի բաբախի գրանցում

Խորհուրդ 21. Որովայնային անհետաձգելի վիրահատության դեպքում պտղի սրտի բաբախի հսկումը պետք է իրականացվի թե վիրահատությունից առաջ, և թե հետո (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ):

Վիրահատության ժամանակ պտղի սրտի բաբախի մոնիտորինգը համարվում էր ամենաճշգրիտ մեթոդը պտղի մոտ վիրահատության ժամանակ պաթոլոգիաների հայտնաբերման համար: Բայց քանի որ գրականության մեջ դեռ չի գրանցվել պտղի սրտի բաբախի ներվիրահատական որևէ խանգարում, ընդունվեց այն տարբերակը, որ պետք է մոնիտորինգային հսկողություն անցկացնել միայն նախա- և հետվիրահատական շրջաններում [57,112]:

Խորհրդատվություն ծննդոգնության վերաբերյալ

Խորհուրդ 22. Խորհրդատվությունը, կապված ծննդոգնության հետ, կարող է անցկացվել նախա- և հետվիրահատական շրջաններում, կախված հիվանդի կլինիկական վիճակից, հղիության ժամկետից և խորհրդատուի ներկա լինելուց (չափավոր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ)

Հղիի և պտղի ակտիվ մոնիտորինգային հսկողությունը պետք է ցանկացած հղի հիվանդի խնամքի մի մասը կազմի, իսկ խորհրդատվությունը պետք է անցկացվի՝ հաշվի առնելով հիվանդի վիճակը և որովայնում առկա սուր պրոցեսների առկայությունը: Կախված վերը նշվածից, կոնսուլտացիան կարելի է հետաձգել, նախ գնահատելով սուր պրոցեսների վերացման անհրաժեշտությունը [181]:

Տոկոլիտիկներ

Խորհուրդ 23. Տոկոլիտիկները հղի հիվանդների համար չպետք է հանդիսանան կանխարգելիչ միջոց արյունահոսության դեմ, սակայն կարող են ակտիվորեն օգտագործվել վիրահատված հղիների մոտ, եթե կա վաղաժամ ծննդաբերության վտանգ (բարձր որակի ապացույցներ; ուժեղ խորհուրդ)

Բոլոր վաղաժամ ծննդաբերության սպառնալիքով հղիները կարող են արդյունավետորեն հսկվել տոկոլիտիկների ազդեցությամբ, սակայն դրանց ընդունումը պետք է լինի անհատականացված և մանկաբարձի հսկողության ներքո: Իսկ որպես կանխարգելիչ միջոց այն գրականության մեջ չի նշվում [182-185]:

Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Սույն ուղեցույցի պահանջները հնարավոր է ապահովել Հայաստանի բուժհաստատություններում ներդնելով հետևյալ գործառույթները՝

- *Գործելակարգեր, ընթացակարգեր, որոշումների ընդունման աջակցման համակարգեր*
- *Շարունակական ինֆերակտիվ կրթական միջոցառումներ*
- *Աուդիտ տեղայնացված ցուցանիշների կիրառմամբ*

Գործելակարգերը պետք է ընդգրկեն տվյալ բուժհաստատության պայմաններում վիրաբուժական խնդիրներով հղի պացիենտների համալիր վարման որևէ բաղադրիչի մանրամասն նկարագրություն: Գործելակարգում նշված բոլոր քայլերը և նրանց հերթականությունը կրում են պարտադիր բնույթ և ենթակա չեն կամայական մեկնաբանությունների: Ցանկացած շեղում հանդիսանում է հիմնավորումների և

ընդլայնված ձևաչափով քննարկումների հիմք: Ուղեցույցի աուդիտի ցուցանիշները պետք է արտացոլեն տվյալ ախտաբանության կլինիկական և կազմակերպչական վարման հիմնաքարային օղակները, որոնք էականորեն ազդում են բուժման ելքերի վրա: Նրանք բաժանում են ամբողջ գործընթացը առանձին ավելի դյուրին ընկալվող և վերահսկվող փուլերի: Փուլերի վերահսկումը կրում է ինչպես որակական, այնպես էլ ժամանակային բնույթ: Այս գործընթացին ներկայացվող պարտադիր պահանջներից են ցուցանիշների չափելի բնույթը և տեղեկատվության համակարգային շարունակական հավաքագրումը: Առաջարկվող աուդիտի ցուցանիշներն են՝

- **Ներվիրահական կապնոգրաֆիայի օգտագործումը**
- **Վիրահատությունների քանակը որոնց ընթացքում տրոակարը տեղադրվել է ՈւՁՀ հսկողության տակ**
- **Վիրահատած հղիների քանակը ում մոտ պտղի սրտի բաբախը վերահսկվել է նախա- և հետվիրահատական շրջաններում**
- **Ներ- և հետվիրահատական խորանիստ երակային թրոմբոզների կանխարգելման չեկ լիստի (պնևմատիկ ճնշող միջոցներ, վաղ մոբիլիզացիա) առկայությունը**

Գրականության ցանկ

1. Kammerer WS (1979) Nonobstetric surgery during pregnancy. The Medical clinics of North America 63:1157-1164
2. Kort B, Katz VL, Watson WJ (1993) The effect of nonobstetric operation during pregnancy. Surgery, gynecology & obstetrics 177:371-376
3. Fallon WF, Jr., Newman JS, Fallon GL, Malangoni MA (1995) The surgical management of intra-abdominal inflammatory conditions during pregnancy. Surg clin North Am 75:15-31
4. GH Guyatt OA, R Kunz, GE Vist, Y Falck-Ytter, HJ Schunemann; GRADE Working Group (2008) GRADE: an emerging consensus on rating quality of evidence and strength of recommendations. BMJ 336:924-926
5. Baer J (1932) Appendicitis in pregnancy with changes in position and axis of the normal appendix in pregnancy. JAMA 98:1359-1364

6. Eyvazzadeh AD, Levine D (2006) Imaging of pelvic pain in the first trimester of pregnancy. *Radiologic clinics of North America* 44:863-877
7. (1977) Medical radiation exposure of pregnant and potentially pregnant women. National Council on Radiation Protection and Measurements report no. 54, Bethesda, MD
8. Kennedy A (2000) Assessment of acute abdominal pain in the pregnant patient. *Seminars in ultrasound, CT, and MR* 21:64-77
9. Toppenberg KS, Hill DA, Miller DP (1999) Safety of radiographic imaging during pregnancy. *Am Fam Physician* 59:1813-1818, 1820
10. Moore C, Promes SB (2004) Ultrasound in pregnancy. *Emergency medicine clinics of North America* 22:697-722
11. Lim HK, Bae SH, Seo GS (1992) Diagnosis of acute appendicitis in pregnant women: value of sonography. *Ajr* 159:539-542
12. Nelson MJ, Cavalieri R, Graham D, Sanders RC (1986) Cysts in pregnancy discovered by sonography. *J Clin Ultrasound* 14:509-512
13. Timins JK (2001) Radiation during pregnancy. *N J Med* 98:29-33
14. Karam PA (2000) Determining and reporting fetal radiation exposure from diagnostic radiation. *Health physics* 79:S85-90
15. Chen MM CF, Kaimal A, Laros Jr RK (2008) Guidelines for computed tomography and magnetic resonance imaging use during pregnancy and lactation. *Obstet Gynecol* 112
16. (1977) Medical radiation exposure of pregnant and potentially pregnant women. National Council on Radiation Protection and Measurements report No 54: Bethesda, MD
17. Doll R, Wakeford R (1997) Risk of childhood cancer from fetal irradiation. *The British journal of radiology* 70:130-139
18. Osei EK, Faulkner K (1999) Fetal doses from radiological examinations. *The British journal of radiology* 72:773-780
19. Lowe SA (2004) Diagnostic radiography in pregnancy: risks and reality. *The Australian & New Zealand journal of obstetrics & gynaecology* 44:191-196
20. Menias CO, Elsayes KM, Peterson CM, Huete A, Gratz BI, Bhalla S (2007) CT of pregnancy-related complications. *Emerg Radiol*
21. Hurwitz LM, Yoshizumi T, Reiman RE, Goodman PC, Paulson EK, Frush DP, Toncheva G, Nguyen G, Barnes L (2006) Radiation dose to the fetus from body MDCT during early gestation. *AJR Am J Roentgenol* 186:871-876
22. Forsted DH, Kalbhen CL (2002) CT of pregnant women for urinary tract calculi, pulmonary thromboembolism, and acute appendicitis. *AJR* 178:1285
